

Հայաստանի Հանրապետությունում լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու հետ կապված օրենսդրության եւ արակտիկայի ուսումնասիրություն

Հայաստանի Հանրապետությունում մինչեւ 2003թ. լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը հանցագործություն չէր համարվում եւ քրեորեն չէր պատժվում: Իրավական վիճակը փոփոխվել է նոր Քրեական օրենսգրքը ընդունելով, որը ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից: Գործող քրեական օրենսդրությունը լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը դիտում է որպես հանցագործություն եւ 164 հոդվածի համաձայն՝

1. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝

պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Վերջին 2 տարվա ընթացքում Հանրապետությունում լրագրողների դեմ կատարված բազմաթիվ բռնարարքների փաստերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թեև գործող քրեական օրենսդրությունը պատասխանատվություն է նախատեսում լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը համար, սակայն իրավապահ մարմինների կողմից ընդամենը մեկ անգամ է կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածը «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը»: Մնացած բոլոր դեպքերում մեղավորները պատժվել են քրեական օրենսգրքի այլ հոդվածներով, որոնք ոչ մի կերպ չեն առնչվում լրագրողի գործունեությանը խոչընդոտելու հետ, կամ ընդհանրապես քրեական գործ չի հարուցվել եւ մեղավորները անպատիժ են մնացել:

2004թ. ապրիլի 5-ին «Ազգային միաբանություն» կուսակցության կողմից երեւանում կազմակերպված հանրահավաքի ժամանակ անհայտ անձանց կողմից լրագրողների նկատմամբ կիրառվել է ֆիզիկական բռնություն եւ վնաս է հասցվել նրանց տեխնիկական միջոցներին: Իրավապահ մարմինները հայտնաբերել են հարձակվողներից միայն երկուսին՝ Աշոտ Ավետիսյանին եւ Հրայր Հարությունյանին, որոնց նկատմամբ քրեական գործ է հարուցվել եւ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդ. I մասով «Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը»: Նշված հոդվածի 1 մասը հետեւյալ պատիժ է սահմանում՝ տուգանք՝ աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկուամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Տվյալ քրեական գործով դատաքնությունը տեղի է ունեցել

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում 2004թ. հունիսի 10-ին: Դատարանի դատավճռով ամբաստանյալները դատապարտվել են եւ նրանց նկատմամբ պատիժ է սահմանվել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով /100 հազար դրամ/: Մինչեւ դատաքննության սկիզբը մեղադրյալների կողմից վերականգնվել է Հանրային հեռուստաընկերության, «Կենտրոն» հեռուստաընկերության, «Հայկական ժամանակ» եւ «Առավոտ» թերթերին պատճառված վնասը: Դատաքննության ընթացքում տուժողների կողմից լրացուցիչ նյութական պահանջ չի ներկայացվել:

Մեր կարծիքով ապրիլի 5-ին լրագրողների հանդեպ կատարված բռնությունները պարունակում են ՀՀ Քրեական օրենսգրքի երկու հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ՝ ոչ միայն դիտավորությամբ ոչնչացվել է լրագրողների գույքը, այլեւ խոչընդոտվել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեության իրականացումը: Հետեւաբար, պետք է կիրառվեր ՀՀ Քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածը /«Հանցագործությունների համակցություն»/ եւ մեղադրանք առաջադրվեր ՀՀ Քր. օր-ի եւ՝ 185, եւ՝ 164 հոդվածներով, ինչը չի կատարվել նախաքննություն իրականացնող մարմնի կողմից:

Այդ սխալը անտեսվել է նաեւ դատարանի կողմից: Քրեական գործը վարույթ ընդունելու 15 օրվա ընթացքում դատավորը դատական քննություն նշանակելու մասին որոշում ընդունում է միայն, եթե մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների: Կային բոլոր հիմքերը, որպեսզի դատավորը, հիմնվելով Քր. Դատ. օր-ի 292 (5) եւ 293 (1) հոդվածների վրա, որոշում կայացներ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Գլխավոր դատախազության մամլո ծառայության կողմից արված հայտարարության համաձայն, ի սկզբանե քրեական գործը հարուցվել էր ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի համաձայն «Խուլիգանություն»: Հետագայում հանցավոր գործողությունները վերաորակավորվել են եւ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդ. 1 մասով:

Հաջորդ միջադեպը, որի ժամանակ լրագրողների մասնագիտական օրինական գործունեության խոչընդոտման փաստեր են արձանագրվել, տեղի է ունեցել 2004թ. ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը: Նշված ժամանակ լրագրողները իրականացրել են իրենց մասնագիտական գործունեությունը եւ համապատասխան տեղեկություններ ստանալու եւ հետագայում այն տարածելու նպատակով նկարահանել են ընդդիմության կողմից Երեւանում կազմակերպված երթը, որը ավարտվել էր Ազգային ժողովի մոտ հանրահավաքով: Հանրահավաքի մասնակիցներին ցրելու նպատակով ՀՀ Ոստիկանության կողմից ֆիզիկական ուժ եւ հատուկ միջոցներ են օգտագործվել, որի արդյունքում տուժել են նաեւ լրագրողները եւ նրանց տեխնիկական միջոցները: Տուժողների ցուցակում էին «Հայկական ժամանակ» թերթի թղթակիցներ՝ Հայկ Գեւորգյանը եւ Ավետիս Բաբաջանյանը, «Զորորդ իշխանություն» թերթի թղթակից՝ Մհեր Ղալեչյանը եւ OPT հեռուստաընկերության օպերատոր Լեւոն Գրիգորյանը:

Ապրիլի 12-ին եւ 13-ին տուժված լրագրողներից երկուսը՝ Հայկ Գեւորգյանը եւ Մհեր Ղալեչյանը ՀՀ Գլխավոր դատախազություն էին դիմել քրեական գործ հարուցելու եւ մեղավոր անձանց պատժելու պահանջով: Տուժողներից ստացված տվյալների համաձայն քրեական գործ չի հարուցվել եւ մեղավորները պատժի չեն ենթարկվել: Մինչդեռ՝ հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները ՀՀ քրեական դատավարության 176 հոդվածի 2 մասի համաձայն քրեական գործ հարուցելու առիթ են հանդիսանում: Նույն օրենսգրքի 180 հոդվածը հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգ է սահմանում, համաձայն որի, հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն եւ լուծվեն անհապահ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը եւ հիմքերի

բավարար լինենը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Նշված միջադեպի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ լրագրողները իրենց մասնագիտական օրինական գործունեությունը իրականացնելու ժամանակ անպաշտպան են եւ՝ որպես լրագրող, եւ՝ որպես ՀՀ քաղաքացի, որովհետեւ հանցագործությունը առկա է, սակայն քրեական գործ չի հարուցվել ՀՀ Քրեական օրենսգրքի ոչ 164 հոդվածով, ոչ էլ որեւէ այլ հոդվածով, մեղավորները անպատիժ են մնացել, հետեւաբար կարող են շարունակել իրենց հանցավոր գործունեությունը եւ որպես անպատժելիության վառ օրինակ կարող են թեւավորել այլ անձանց հանցագործություն կատարելու համար:

Նշված երկու միջադեպերի վերաբերյալ ԵԱՀԿ-ի Երեւանյան գրասենյակի ղեկավար Վ.Պրյախինի կողմից 2004թ. հունիսի 21-ին հարցում էր կատարվել ՀՀ Գլխավոր դատախազություն, որտեղից օգոստոսի 6-ին պատասխան էր ստացվել Գլխավոր դատախազի տեղակալ Գեւորգ Դանիելյանի ստորագրությամբ: Պատասխանի համաձայն ապրիլի 5-ի միջադեպի վերաբերյալ նախաքննությունը ավարտվել էր հունիսի 2-ին, իսկ հունիսի 10-ին դատաքննություն էր կայացել եւ դատավճռի համաձայն երկու անբաստանյալները պատժի են ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդվածով: Միաժամանակ հայտնվել է, որ ապրիլի 12-13 տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ քննությունը շարունակվում է:

2004թ. օգոստոսի 24-ին Ծաղկաձորում լրագրողների դեմ հաջորդ բռնություն է տեղի ունեցել: «Ֆոտոլուր» լրատվական գործակալության ֆոտոլրագրող Մխիթար Խաչատրյանը եւ «Առավոտ» թերթի լրագրող Աննա Իսրայելյանը Ծաղկաձորում մարզային համալիրի հարեւանությամբ անտառահատման եւ անառանցներ կառուցելու փաստերը ուսումնասիրելու ու համապատասխան հաղորդում պատրաստելու համար իրականացնում էին իրենց մասնագիտական գործունեությունը: Ոմն Գագիկ Ստեփանյանը սպառնացել է լրագրողներին, տվել է խուլիգանական հայհոյանքներ, Մ.Խաչատրյանին մարմնական վնասվածքներ հասցնելով վերցրել էր ֆոտոխցիկի հիշողության չիփը եւ խանգարել լրագրողների օրինական գործունեությանը:

ՀՀ Գլխավոր դատախազության կողմից 2004թ. օգոստոսի 26-ին տարածված մամուլի հաղորդագրության համաձայն փաստի առթիվ Գագիկ Ստեփանյանի նկատմամբ քրեական գործ էր հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածով եւ 258 հոդ. 1 մասով՝ «խուլիգանություն»:

Հոկտեմբերի 11-ին Կոտայքի մարզի առաջին աստանի դատարանը Հրազդան քաղաքում ավարտեց սույն գործի դատաքննությունը եւ անբաստանյալ Գագիկ Ստեփանյանին դատապարտեց ազատազրկման՝ վեց ամիս ժամկետով: Մինչեւ դատաքննության սկսվելը մեղադրյալը հատուցել էր տուժողի վնասը 250 ԱՄՆ դոլարի չափով:

2004թ. հոկտեմբերի 13-ին ծեծել են «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին: Ի դեպ, նա մեկ շաբաթ առաջ մարզպետի հրամանով ազատվել էր աշխատանքից: Ըստ Ս.Ալեքսանյանի՝ առավոտյան նրա աշխատասենյակ է մտել «Սյունյաց արծիվներ» ՀԿ-ի նախագահ, ՀՀԿ անդամ Խաչիկ Ասրյանը՝ երկու տղաների հետ: Ասրյանը հարցրել է, թե ինչու է վերջին համարներում քննադատել ՀՀ վարչապետին ու Սյունիքի մարզպետին: Ալեքսանյանը փորձել է բացատրել, բայց Ասրյանը բռունցքով անսպասելի հարվածել է Ալեքսանյանի դեմքին, հետո մահակով հարվածներ է հասցրել: Ալեքսանյանը դիմել է իրավապահ մարմիններին, ՀՀ

գլխավոր դատախազին, հեռագրեր է ուղարկել Ռ.Քոչարյանին, վարչապետին, ԵԱՀԿ-ի գրասենյակ: Փաստի առնչությամբ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածով՝ «Խուլիգանություն»:

2004թ. հունիսի 24-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը կարճել է գործի վարույթը իրադրության փոփոխման հիմքով /ՀՀ քրեական դատավարության օր-ի 37 հոդված/:

Սույն ուսումնասիրությունում անդրադարձել ենք միայն չորս միջադեպերին, որոնց ժամանակ լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու փաստեր են արձանագրվել: Նման դեպքերը ավելի բազմաթիվ են, սակայն տարբեր պատճառներով դրանց ընթացք չի տրվում:

Ներկայացված չորս դեպքերն էլ վերաբերում են լրագրողի գործունեությանը խոչընդոտելուն, սակայն ընդհամենը մեկ անգամ է կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը՝ «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը»:

Սույն վերլուծությանը ավարտելու ժամանակ տեղեկացանք որ, ս/թ նոյեմբերի 24-ին լրագրողի գործունեությանը խոչընդոտող եւս երկու դեպք է տեղի ունեցել: Հանրային ռոդիոյի շենքի մոտ «Ա1+»-ի լրագրող Դիանա Մարկոսյանը փորձել էր նկարահանել, թե ինչպես են հատուկ ջոկատայինները ծեծի ենթարկում «Հանրապետություն» կուսակցության Շենգավիթի տարածքային կազմակերպության ղեկավար Աշոտ Պողոսյանին, ուստի կանոնադրության մի կապիտան խոչընդոտել էր նրա մասնագիտական գործողություններին եւ հարվածել: Իսկ Մալաթիա-Սեբաստիա համայնքում ընդդիմության հանրահավաքից հետո հարձակում էր կատարվել նաեւ Հանրային հեռուստաընկերության «Հայլուր» ծրագրի թղթակից Տաթևիկ Նալբանդյանի նկատմամբ Հարձակվողները մի խումբ կանայք էին, որոնց ուղղորդել էր մի տղամարդ /ըստ «Առավոտ» թերթի նյութերի վերջինս արդեն ձերբակալված է/: Գործընկերների օգնությամբ թղթակցին հաջողվել էր խուսափել բռնությունից:

ՀՀ գործող օրենսդրությունը ուսումնասիրելուց հետո կարելի ասել, որ լրագրողները օրենքով պաշտպանված են իրենց մասնագիտական օրինական գործունեությունը իրականացնելու ժամանակ, սակայն անպաշտպան են պրակտիկայում, քանի որ օրենքը կիրառող մարմինները միշտ չէ որ ցանկանում են իրականացնել օրենքի պահանջները: Ինչպես փորձն է ցույց տալիս, նրանց անգործության պատճառաբանությունները շատ տարբեր են լինում:

Մեր կարծիքով, որպեսզի լրագրողը լիովին պաշտպանված լինի իր մասնագիտական գործունեությունը իրականացնելիս, իսկ մեր հասարակության յուրաքանչյուր ոք իր հերթին լիարժեք օգուվի խոսքի ազատության սահմանադրական իրավունքից՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու, անհրաժեշտ է խստացնել ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածով նախատեսված սանկցիաները:

«Ինտերնյուս» ՀԿ
իրավախորհրդատու

Օլգա Սաֆարյան